ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » հունիսի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-157-24.05.2019-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 789 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-157-24.05.2019-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է ավագանու խմբակցություններին տալ իրավասություն հանդես գալու, տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնությամբ: Այդ կապակցությամբ պետք է նշել, որ նախագծի հեղինակների կողմից չեն ներկայացվում այդ դրույթի սահմանման անհրաժեշտության վերաբերյալ բավարար հիմնավորումներ, բացի նրանից, որ նմանատիպ կարգավորում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ Օրենք) նախկինում եղել է: Տեղական հանրաքվեի անցկացման նախաձեռնությամբ հանդես գալն ինքնանպատակ չէ. այստեղ կարևոր հանգամանք կարող է հանդիսանալ Երևանի բնակիչների զգալի հատվածի շահերից բխող հարցով տեղական հանրաքվե նշանակելը, իսկ նման հարցի առկայության դեպքում ավագանու մեկ երրորդը (ինչպես որ ներկայումս սահմանված է Օրենքում) հաստատապես կնախաձեռնի այդ հարցը հանրաքվեի դնելը: Այդ պարագայում հավանականությունը մեծ է, որ նախաձեռնության վերաբերյալ իր դրական վերաբերմունքը կհայտնի նաև ավագանու անդամների մեծամասնությունը: Առաջարկում ենք նախագծի 1-ին և 7-րդ հոդվածները հանել:

2. Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվում է հստակեցնել քաղաքապետի, քաղաքապետի տեղակալների, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների, Երևանի ենթակայության կազմակերպությունների ղեկավարների կողմից ավագանու անդամի պահանջով վերջինիս ընդունելու ժամկետը՝ սահմանելով այն երեք օր: Այս առումով հայտնում ենք, որ չեն բացառվում դեպքեր, երբ այդ ժամկետը հնարավոր չի լինի ապահովել, օրինակ՝ ամանորյա տոներին կամ այլ տոներին, երբ տոնին հաջորդում են հանգստյան օրերը, քաղաքապետի արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվելիս: Ուստի առաջարկում ենք Օրենքի «հնարավոր սեղմ» ժամկետը թողնել անփոփոխ. չի բացառվում, որ այն նախագծում նշված եռօրյա ժամկետից էլ պակաս լինի:

Օրենքի նույն հոդվածով առաջարկվում է ավագանու անդամին օժտել նոր իրավասությամբ՝ դիտորդի կարգավիճակով, որպեսզի նա կարողանա մասնակցել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գործակարգավարական նիստերին: Օրենքի 65-67-րդ հոդվածների համաձայն՝ Երևանի քաղաքապետի կողմից կազմակերպվող խորհրդակցություններին կարող են մասնակցել համապատասխան պետական մարմինների և մատակարար կազմակերպությունների ներկայացուցիչները: Ըստ այդմ՝ գործակարգավարական նիստերը ընդամենը քաղաքապետի բացառիկ լիազորությունների իրականացմամբ պայմանավորված և զուտ քաղաքային իշխանության գործադիր հատվածի աշխատանքային խորհրդակցություններն են, որոնցում քննարկվում է Երևանի քաղաքապետի կողմից տրված հանձնարարականների կատարման ընթացքն այն անձանց մասնակցությամբ, որոնք ուղղակիորեն կրում կամ կարող են կրել այդ հանձնարարականները կատարելու պարտականությունները, հետևաբար որևէ աղերս չունի այդ նիստերին ավագանու անդամի մասնակցությունը, առավել ևս, որ ավագանու անդամը ցանկացած պահի իրավասու է գրավոր պահանջել և ստանալ այդ նիստերի հետ կապված համապատասխան տեղեկատվություն (Օրենքի 18-րդ հոդված): Հաշվի առնելով վերոնշյալը՝ առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասը հանել:

3. Նախագծի 3-րդ հոդվածով կրճատվում է ավագանու որոշումների, ուղերձների և հայտարարությունների ընդունման նախաձեռնությունները ավագանու նիստում քննարկելու ժամկետը՝ 4 ամսից մինչև 2 ամիս: Այդ առումով հայտնում ենք, որ ավագանու նիստերը հրավիրվում են նստաշրջանների ընթացքում, որոնք գումարվում են փետրվարի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև հունիսի վերջին չորեքշաբթին և սեպտեմբերի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև դեկտեմբերի վերջին չորեքշաբթին: Եթե, օրինակ, որոշումների, ուղերձների և հայտարարությունների ընդունման նախաձեռնությունը ներկայացվի հունիսին, ապա հնարավոր չի լինի ապահովել դրա քննարկումը երկամսյա ժամկետում, քանի որ մոտակա նիստը կարող է հրավիրվել սեպտեմբեր ամսվա վերջին: Բացի այդ, բազմաթիվ նախագծեր կարիք ունեն հանրային քննարկման, այդ թվում՝ համապատասխան խորհրդակցական մարմիններում, ինչպես նաև նորմատիվ բնույթ ունեցող որոշումները՝ արդարադատության նախարարության կողմից փորձաքննության:

4. Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկվող լրացման արդյունքում ավագանու նիստի օրակարգը ձևավորելիս մասնակից են դառնում ավագանու խմբակցությունները: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ խորհրդակցելը կամ չխորհրդակցելը չունի մեխանիզմ և չունի որևէ իրավական հետևանք՝

գտնում ենք, որ այդ հոդվածով նախատեսվող կարգավորումը չի ունենա պրակտիկ կիրառում:

5. Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասում առաջարկվող լրացման արդյունքում ընդլայնվում է ավագանու մշտական հանձնաժողովի նիստին հրավիրվածների ցանկը հաստատողների (նախաձեռնողների) ցանկը՝ այդ իրավասությամբ առաջարկվում է օժտել նաև հանձնաժողովի նախագահին: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ հանձնաժողովը կոլեգիալ մարմին է, և բոլոր որոշումները, այդ թվում՝ նիստերին հրավիրվածների ցանկը հաստատելու մասին, պետք է ընդունվեն հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Հանձնաժողովի նախագահին նման լիազորությամբ օժտելը նպատակահարմար չենք համարում:

6. Նախագծի 6-րդ հոդվածով առաջարկվում է սահմանել քաղաքապետի, քաղաքապետի տեղակալների և քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների կողմից ավագանու անդամների բանավոր հարցերին ավագանու նստաշրջանների ընթացքում երկու ամսվա մեջ առնվազն մեկ նիստի ընթացքում պատասխանելու փոխարեն դրանց յուրաքանչյուր հերթական նիստի վերջին պատասխանելու վերաբերյալ կարգավորում: Այս կապակցությամբ գտնում ենք, որ քաղաքապետի, քաղաքապետի տեղակալների և քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների կողմից ավագանու անդամների հարցերին պատասխանելու նման հաճախականություն սահմանելու անհրաժեշտությունը բավարար չափով հիմնավորված չէ և կարող է հանգեցնել ավագանու նիստերի անհարկի ծանրաբեռնման՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով ավագանու անդամն օժտված է քաղաքապետին նաև գրավոր հարցեր ուղղելու իրավունքով: Ընդ որում, սահմանված է քաղաքապետի կողմից այդ հարցերին պատասխանելու հստակ ժամկետ, այն է՝ 3 շաբաթ:

7. Նախագծի 8-րդ հոդվածով սահմանվում է, որ քաղաքապետը համայնքի աշխատակազմի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է քաղաքապետարանի աշխատակազմի ամենշաբաթյա գործակարգավարական նիստերի միջոցով: Կարծում ենք, որ գործակարգավարական նիստերի անցկացման պահանջն Օրենքով ամրագրելը նպատակահարմար չէ: Այդ նիստերը կրում են ներքին կազմակերպչական բնույթ, որտեղ ներկայացվում են համայնքային առկա խնդիրները և դրանց լուծման վերաբերյալ նախնական առաջարկությունները: Նման նիստեր անցկացվում են գրեթե բոլոր պետական մարմիններում, չնայած այն հանգամանքին, որ այդ կապակցությամբ որևէ օրենսդրական պահանջ չկա: Առաջարկում ենք նախագծի 8-րդ հոդվածը հանել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծով քննարկվող հոդվածները թողնել անփոփոխ:

Միևնույն ժամանակ Նախագծի 9-րդ հոդվածով առաջարկվում է Օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել: Առաջարկում ենք Օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասը ոչ թե ուժը կորցրած ճանաչել, այլ համապատասխանեցնել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասին և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Վարչական շրջանի ղեկավարի պաշտոնը համայնքային վարչական պաշտոն է:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

19 հունիսի 2019 թվականի N 789 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Խ-157-24.05.2019-ՏՏԳԲ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն.ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հունիսի
Երևան 19

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետում «քաղաքապետի» բառից հետո լրացնել «կամ ավագանու խմբակցության» բառերը:

Հոդված 2.

1) Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասում «հնարավոր սեղմ» բառերը փոխարինել «եռօրյա» բառով:

2) Նույն հոդվածը լրացնել նոր 3.1-ին մասով՝

«3.1. Ավագանու անդամը դիտորդի կարգավիճակով կարող է մասնակցել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ամենշաբաթյա գործակարգավարական նիստերին:»:

Հոդված 3.

Օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասում «4» թիվը փոխարինել «2» թվով:

Հոդված 4.

1) Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը «քաղաքապետը» բառից հետո լրացնել «, խորհրդակցելով ավագանու խմբակցությունների հետ,» բառերով:

2) Նույն մասից հանել «՝» նշանը:

Հոդված 5.

Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասը «իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ» բառերից հետո լրացնել «կամ հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ» բառերով:

Հոդված 6.

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությունում «նստաշրջանների ընթացքում ավագանու կանոնակարգով երկու ամսվա մեջ առնվազն մեկ նիստի ընթացքում» բառերը փոխարինել «յուրաքանչյուր հերթական նիստի վերջին» բառերով:

Հոդված 7.

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասը «Ավագանին տեղական հանրաքվե անցկացնելու մասին որոշումն ընդունում է» բառերից հետո լրացնել «ավագանու խմբակցության,» բառերով:

Հոդված 8.

Օրենքի 50-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով՝

«2. Քաղաքապետը համայնքի աշխատակազմի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է քաղաքապետարանի աշխատակազմի ամենշաբաթյա գործակարգավարական նիստերի միջոցով:»:

Հոդված 9.

Օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Սույն նախագծի ընդհունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն (այսուհետ՝ Օրենք) ընդունվել է 2008 թվականի դեկտեմբերի 26-ին: Մեկ տարի առաջ կատարված փոփոխություններով՝ ավագանու խմբակցությունները զրկվեցին տեղական հանրաքվե նախաձեռնելու լիազորությունից: Նախագծով Օրենքի 12-րդ և 39-րդ հոդվածներում կատարվող լրացումներով առաջարկվում է Երևանի ավագանու խմբակցություններին վերադարձնել տեղական հանրաքվե նախաձեռնելու լիազորությունը, որը, ինչպես նշվեց, նախկինում Օրենքով ամրագրված է եղել:

Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է սահմանել հստակ ժամկետ՝ առավելագույնը 3 օր, երբ ավագանու անդամի պահանջով քաղաքապետը, քաղաքապետի տեղակալները, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները, Երևանի ենթակայության կազմակերպությունների ղեկավարները պարտավոր են ընդունել ավագանու անդամին: Օրենքում սահմանված «հնարավոր սեղմ ժամկետում» կարգավորումը տարաբնույթ մեկնաբանությունների հնարավորություն է ընձեռում և գործնականում հանգեցնում հանդիպման նշանակման հայեցողության և երկարաձգման:

Առաջարկվում է Օրենքով սահմանել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գործակարգավարական նիստերի կազմակերպումը՝ որպես գործունեության ապահովման միջոց (Օրենքի 50-րդ հոդվածում կատարվող լրացման միջոցով) և Օրենքի 21-րդ հոդվածի նոր 3.1-ին մասով ամրագրել Երևանի քաղաքապետարանի գործակարգավարական նիստերին ավագանու անդամի մասնակցությունը՝ որպես նրա վերահսկողական գործունեության երաշխիք: Ներկայումս այդ նիստերը փակ են ավագանու անդամների համար: Նիստում քննարկվող հարցերի մասին ավագանու խմբակցություններին տրամադրվում է խիստ սահմանափակ տեղեկատվություն, ինչը բավարար չէ Երևան քաղաքին վերաբերող քննարկվող հարցերին բազմակողմանի տիրապետելու համար:

Օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է կրճատել ավագանու որոշումների, ուղերձների և հայտարարությունների ընդունման նախաձեռնություններն ավագանու նիստում քննարկման դնելու ժամկետը 4 ամսից՝ դարձնելով 2 ամիս, քանի որ գործնականում 4 ամիսը երկար և չարդարացված ժամանակահատված է, ինչը կարող է խոչընդոտել խնդրի հրատապ քննարկմանը և լուծմանը:

Գործող օրենքով ավագանու նիստերի օրակարգի ձևավորման լիազորությունը տրված է քաղաքապետին: Օրակարգը կազմվում է քաղաքապետի միանձնյա որոշմամբ: Ավագանու մասնակցությունը նախատեսված չէ, ինչը ստորադասում է այս ինստիտուտի դերն ու նշանակությունը: Գործնականում լինում են դեպքեր, երբ ձևավորված օրակարգի շուրջ ավագանու անդամների մոտ ծագում են հարցեր և անհամաձայնություններ, ինչը կարող է դառնալ նիստի բնականոն աշխատանքների խաթարման պատճառ: Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի փոփոխությամբ առաջարկվում է օրակարգի ձևավորման գործընթացում խորհրդակցական կարգով ներառել նաև ավագանու խմբակցություններին:

Օրենքի 33-րդ հոդվածով առաջարկվում է, որ մշտական հանձնաժողովի նիստին քննարկվող հարցին առնչվող անձինք՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները, Երևանի ենթակայության կազմակերպությունների ղեկավարները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը հրավիրվեն ոչ միայն հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, այլ նաև հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ: Այս խնդիրը գործնականում ծագել է և հարկ ենք համարում հանձնաժողովի նախագահին ընձեռել այդ լիազորությունը՝ հանձնաժողովի աշխատանքներն ավելի արդյունավետ և օպերատիվ կազմակերպելու համար:

Երևանի քաղաքապետը և վարչական շրջանների ղեկավարները գործող օրենքով պարտավորված են 2 ամսվա մեջ առնվազն 1 նիստի ընթացքում պատասխանել ավագանու անդամների բանավոր հարցերին: Հաշվի առնելով խմբակցությունների՝ քաղաքացիների կողմից դիմումներ ընդունելու և խնդիրներին լուծում տալու ծանրաբեռնվածության աստիճանը՝ գործնականում անհրաժեշտություն է առաջացել ավագանու անդամներին առավել հաճախ ընձեռել հնարավորություն Երևանի քաղաքապետին և վարչական շրջանների ղեկավարներին բանավոր հարցերով դիմելու և պարզաբանումներ ստանալու համար: Ըստ այդմ առաջարկվում է փոփոխությանենթարկել Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը և յուրաքանչյուր հերթական նիստի վերջում նախատեսել հարցուպատասխան՝ քաղաքի գործադիր իշխանության ներկայացուցիչների հետ:

Օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասում փոփոխության անհրաժեշտությունն առաջացել է՝ պայմանավորված «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված դրույթների հետ հակասությամբ: Համաձայն՝ նշյալ կարգավորման՝ ի թիվս այլոց, համայնքային վարչական պաշտոններն են (...) Երևանի վարչական շրջանի ղեկավարի (...) պաշտոնները: Ըստ այդմ վարչական շրջանի ղեկավարի պաշտոնը հայեցողական չէ և վերջինիս նկատմամբ կիրառելի են համայնքային վարչական պաշտոնին վերաբերելի իրավակարգավորումները: